ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Է/40/2103-25 առ 26 08 2025թ.

«ԵՎՐՈՏԵՔՍ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ
Տնօրեն
Վ. Արշակյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/24-01/042 պայմանագրի միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Արշակյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ինտելեկտուալ էլեկտրոնային սարքի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ԵՎՐՈՏԵՔՍ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի փետրվարի 6-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/24-01/042 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրով սահմանված է.

- 1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ինտելեկտուալ էլեկտրոնային սարքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

- Գնորդն իրավունք ունի՝

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

- 2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2025 թվականի մայիսի 29-ին «ԵՎՐՈՏԵՔՍ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները, համաձայն 2025 թվականի հունիսի 2-ի թիվ 417 եզրակացության և Մուտքային վերահսկողության ակտի չեն համապատասխանում պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրին: Վերոգրյալ եզրակացությամբ արձանագրվել է, որ «թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/24-01/042» առ 06.02.2025թ. պայմանագրով նախատեսված է՝ ABB REL-670 ինտելեկտուալ սարք, բարձրավոլտ գծերի հեռահար պաշտպանության համար: Տարբերակ 2.2.ՄԷԿ-ABB; տերմինալի սնուցումը արտաքին աղբյուրից 220V DC; անալոգային մուտքեր էլեկտրամագնիսական TT-ից (երկրորդային հոսանք – 1A), TH-ից; հաղորդակցության պրոտոկոլ – IEC-61850, որի փոխարեն մատակարարվել է DELTA PMT-30V150W2BA տիպի սնուցման աղբյուր: Փաստացի մատակարարված ապրանքները չեն համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական պահանջներին»: Մուտքային վերահսկողության ակտով արձանագրվել է «Ապրանքի լրակազմությունը չի համապատասխանում պայմանագրին: Անհամապատասխանություն՝ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/24-01/042 պայմանագրի շրջանակներում նախատեսված է ինտելեկտուալ էլեկտրոնային սարք՝ ABB REL-670 (2.2.ՄԷԿ-ABB) մոդելի, որի փոխարեն փաստացի մատակարարվել է սնուցման աղբյուր՝ DELTA PMT-30V150W2BA տիպի: Եզրակացություն՝ փաստացի մատակարարված ապրանքները չեն համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական պահանջներին»:

2025 թվականի հունիսի 2-ին «ԵՎՐՈՏԵՔՍ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն տեղեկացվել է անհամապատասխանության մասին և ընկերությանը ուղարկվել է մատակարարված ապրանքի վերաբերյալ կազմված վերոգրյալ մուտքային վերահսկողության ակտը և եզրակացությունը, իսկ Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետի համաձայն առաջարկվել է ծանուցման օրվանից հաշված 5 օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով սահմանված բնութագրին համապատասխանող ապրանք: Նշված ժամկետում «ԵՎՐՈՏԵՔՍ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից մատակարարում չի իրականացվել:

Ամփոփելով վերոգրյալը արձանագրվում է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ԵՎՐՈՏԵՔՍ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի փետրվարի 6-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/24-01/042 պայմանագիրը, որով «ԵՎՐՈՏԵՔՍ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել պայմանագրի անբաժան մաս կազմող Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութարով ինտելեկտուալ էլեկտրոնային սարքը, որի փոխարեն մատակարարվել է DELTA PMT-30V150W2BA տիպի սնուցման աղբյուր՝ փաստացի խախտելով Պայմանագրի 1.1, 2.4.2 և 2.4.5 կետերով ստանձնած պարտավորությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով Պայմանագրի 2.1.7 կետով (2.1.7.1 ենթակետի «ա» պարբերություն)՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ԵՎՐՈՏԵՔՍ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի փետրվարի 6-ին կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/24-01/042 պայմանագիրը և առաջարկում ենք համաձայն պայմանագրի 2.4.7 կետի, հետ տանել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91